

Թերդեանի կոնդակը, Ասկոյն ժողովուրդը ամեն տեղ ազմկել է և թոյլ չե տուել ընթերցումն Այս կոնդակով Թերդեանը սկսհանջում է, ոռու ոչ երեսփ.—Ժողով, ոչ վարչութիւն, և ոչ Հոգաբարձութիւն ունենայ աղջը, ոյլ ամեն գործ կղերը մասակարարէ, կղերը վարէ, ու ժողովուրդը մենակ դրամը տայ, դրամ հաօյնէ, բայց երբէք հաշիւ չոլահանջէ» (Բիւղ. 13 յունիս)։

Թերդեան Սրբադանի կոնդակի ընթերցման առիթով աղմուկներ Կարինում էլ են եղել. ընդհատուել է կոնդակի ընթերցումը. Այդ կոնդակի ըօվտնդակութիւնը «Յառաջ Արագրից առնելով այսպէս է առաջ բերում Քիւզանդիոնը» (յունիս 14)։

«Ժողովուրդը ձայն չունի բնաւ առաջնորդ եպիսկոպոսի ընտրութեան գործին մէջ. մեր Աղջ. Երեսփ. Ժողովին նպատակն է անկրօնութիւն ստեղծել և նոր Բուզոքական Եկեղեցի մը հաստատել ընդդէմ կաթոլիկ ուղղափառ Եկեղեցին»։

Կարնոյ հայ կաթոլիկ ժողովուրդը դժգոհ է առաջնորդ Քչուրեան եպիսկոպոսից, որին հովանաւորում են հակառակ ժողովրդի ցանկութեան վատիկանն ու պատրիարքարանը։

## Օ Տ Ա Բ Ե Կ Ե Պ Ե Ց Ի

### ՊՐԱԿԻՌՈՒՄԻ ԵԿԵՂԵՑԻ

Դիւդատնեսական պարապմունքներ եկեղ.-ծխական դպրոցներում.

Ռուս Արքայերը հաղորդում են, որ Ռուս Որբ. Սինոդի նախկին օքեր-պրօկուրօր Ա. Ա. Լուկիանովը առաջարկել էր նախարարների խորհրդին մի օրինադիմ ձևական դպրոցներում դիւդատնեսական զբաղմունքներ սահմանելու համար 1912 թուին հետեւել գումարները յատ-

կացնել. ա) նախապատրաստութեան համար 140800 ռ. ը.) գիւղատնտեսական զբաղմունքները կազմակերպելու և մուծանելու համար 233,000 ր. և գ.) գիւղատնտեսական զբաղմունքները զեկավարողներին՝ 15,000 ռ. ընդ ամենը 388,800 ր. նախարարների խորհուրդը մոյիսի 21-ին նիստում սկզբունքով քարեացակամ վերաբերմունք ցոյց տուեց օրինագծին ցանկութիւն յայտնելով՝ որ զբաղմունքները լինեն գլխաւորագետ գործնական, որ գանձուց վարչութեան համաձայնութեամբ նոյն նպատակի համար որոշուած գումարը կիրարկուի, և որ օրինագծի մէջ անողատճառ ցոյց տրուեն գլխաւոր հիմքերը, որոնց վերայ կարծում է բանալ գիւղատնտեսական զբաղմունքները:

Պրաւուաւ ազգային եկեղեցական ժողով.

Նորից սկսել են զրոյցներ լինել պրաւուաւ համառուսական եկեղեցական ժողովի մասին։ Պ. Վարվարինը Ռուս. Слово լրագրում աւելուդ է համարում ժողովը, առարկելով՝ որ արծարծուող խնդիրները այն տեսակի են, որ աւելի լաւ կը լիներ վարչական եղանակով վճռել.

Արք. Ենտ. (№ 24) ասում է. «Պ. Վարվարինը» ինչպէս երեսում է, ժողովի մասին այնպիսի հայեացք ունի, որ, որպէս թէ ժողովները պէտք է գումարուեն միայն դաւանաբանական խնդիրները վճռելու համար. բայց այդ արդարացի չէ, որովհետեւ եկեղեցու կանոններով և սովորութեամբ ժողովում պէտք է վճռուեն եկեղեցու բարեշինութեան համար բոլոր խնդիրները։ Այսուղ ժողովի գաղափարի ոչ մի նուաստացում չկայ։ Նոյն իսկ այն խնդիրները, որոնք Պ. Վարվարինին շատ մանր են թւում, իսկապէս ամեննեին այդպէս չեն։ Նա այդ խնդիրները արտաքուստ և վեր ի վերոյ է քննում, չթափանցելով նրանց էռութեանը, իսկ սկզբունքի տեսակէտից հոգեսրականների ոսճիկներն էլ, ամուսնալուծական գատավարութիւնն էլ շատ լուրջ գործեր են։

Մօսք. Ենձ. հարկաւոր է համարում, որ մինչև ազգային եկեղեցական ժողովը եպիսկոպոսական մասնակի

գումարումներ լինեն, և Մենք, առում է լրագիրը, ամեն տարի լսում ենք նահանգապետների, դպրոցական հաստատութիւնների զանազան ձեռնարկութիւնների ղեկավարողների գումարումների մասին։ Եսկ եկեղեցու եպիսկոպոսները համարեա ընտւ չեն տեսնում իսպր հետ մի քիչ աշքի ընկնող ժողովներում։ Մինչդեռ հաշոելով նոյն իսկ հանգստեան մէջ եղողներին էլ, եպիսկոպոսների թիւը 140-ից աւելի չէ։ Եւ հեշտ կը լինէր որ նրանք 20-ական 30-ական 50-ական հօգի խմբուէին՝ մոքերի, հայեցքների, տպաւորութիւնների և ենթադրութիւնների փոխանակութիւն կատարէին եկեղեցու անհրաժեշտ կարիքների համար։ Այդպիսի խմբումների ժամանակ կը մշակուէր եկեղեցու կարիքների խնդիրը և պատրաստի նիւթ կը դառնար Սրբ. Արքօգի և հօգեսոր վարչութեան ձեռնարկութիւնների համար։ . . .

Церк. ԵԵԾ. իւր կողմից առում է. Եպիսկոպոսարանների համախմբման միտքը այժմէական է։ Բայց պէտք է հոգալ նաև եկեղեցական համայնքի միութեան համար էլ Յիւատի, 5 տարի առաջ այս կամ այն համայնքը եռանգով քննում էր եկեղեցական խնդիրները։ Բայց այդ վաղ էր. այդ ժամանակից յետոյ շտա բան է փոխուած։ Դրա համար էլ այժմ նորից անհրաժեշտ է մոքի փոխանակութիւն։ մահաւանգ որ եկեղեցական գործում պէտք է մասն ունենան եկեղեցու բոլոր անդամները։

Церк. ԵԵԾ. անհրաժեշտ է համարում թեմական ժողովները, ուր աշխարհականներն էլ հոգեորակուների հետ հաղորդ լինէին եկեղեցու գործերին. և համառուսական եկեղեցական ժողովին պէտք է նախընթաց լինեն թեմական ժողովները, ոչ թէ որպէս երբեմնական, այլ տեսական հաստատութիւններ։

Թեմական ժողովների միտքը ի հարկէ նոր չէ, այլ այնքան հին է, որքան և ինքն եկեղեցին, եկեղեցու առաջին ժամանակում որևէ թեմի բոլոր հոգեորականութիւնը ներկայանում էր մի տեսակ ժողով . . . ժամանակի ընթացքում թէի եկեղեցական կետնքը շտա բարդացաւ ի

შოთა დავითესერի, բայց թեմაկան დავითესერի սიվირო-  
მხელը, դոნէ որպէս կահոնաւորուած համախմբումն հո-  
գիօրականութեան եպիսկոպոսի գլխաւորութեամբ՝ երկար  
ժամանակ պահպանուեց. Այժմ տեղի ունեցող հոգեորա-  
կանների համախմբումն, լրագիրը համառւմէ պաշտօնա-  
կան ներկայացոցիչների ժողով. ժողովի իրաւասութիւնը  
ձշդիւ որոշուած է լինում. եպիսկոպոսը ներկայ շի գտնուում  
Այդ համախմբումները աւելի վարչական, խորհրդակցական  
են քան տեղական հոգեօրականների ժողով, որին պէտք  
է մասնակցէին բոլոր որբազնուզործ պաշտօնեաները եպիս-  
կոպոսի գլխաւորութեամբ. ժողովի գործունէութիւնը որոշ  
օրենքի ստհմանում ամեն տեսակ խնդիրներ, որոնց կա-  
րելի է իրագործել Ժողովների որոշումները կարող են  
մինչև անգամ չարձանադրուել, որովհետեւ նրա նպատակն  
է հոգեօրականներին միացնելը, թեմի գործերին ծանօ-  
թանալը, եկեղեցու շինութեան համար լու միջոցներ  
փնտրելը, Այդ տեսակ թեմական ժողովներ գումարելու  
յարմար ժամանակներն են ձննդեան տօներից տռաջ կամ  
յետոյ և դպրոցական տարուայ սկզբին, Եթէ տշխարհական-  
ներն ցանկանան, պէտք է թոյլ տալ որ նրանք էլ ներկայ  
լինել ժողովին, ինչպէս ոյժմ երեսփոխանները ներկայ  
են լինում թեմական համախմբումներին (չպարհածան  
ընթացք) . . . \*

«Յանկալի կը լինէր առամ է, Շերք Եկետ.-ը, որ ժողով-  
ների միջոցով եկեղեցական համայնքի բոլոր տարբերի իրար  
մատենալու միտքը աւելի արմատանար. Այն ժամանակ նա-  
տելի կենունակութիւն կըստանար թէ բարձր և թէ ստո-  
րին շրջաններում և ժողովի գումարման համար արուած  
կը լինի մի անկասկած իրական քայլէլ.

Հոգեւոր սեմինարիաների համար նոր կանոնադրութիւն:

Հոգեւոր Սեմինարիաների նոր կանոնադրութիւն մշա-  
կելու համար կազմուած է մի առանձին խորհուրդ . . .  
Հոգեւոր գոլոսցների ծրագիրը բարեփոխութեան հիմնական

ԴՐՈՒՅԹԻՆԸ, ԻՆՉՈՒՄ ՈՐ Այն հկատուել է յունիսի 8-ին ժողովումն էլ, է այն որ Հոգեոր դպրոցները վերափոխուում են վեց դասարանեան հոգեոր ոլոօգիմնադիաների, դրանք կը լինեն հանրակրթական հոգեոր դպրոցներ, որոնց մէջ պէտք է լլթուեն բացառապէս հոգեորականների որդիք զուտ քրիստոնէական հոգով. ուսումն այն կարգով պէտք է աւանդուի, որ ոլոօգիմնազիան աւարտուզները կարողանան աղատորէն մտնել աշխարհիկ բոլոր դպրոցական հաստատութիւնների համապատասխան դասաւանները

**Հոդե.** Սեմինարիաները դառնում են չարս դաստիանեան մասնագիտական հոգուական աստուածաբանական դպրոցներ, ուր կարող լինեն մտնել ոչ միայն հոգեոր պատիմակիանների սաները, այլև համապատասխան ուսմամբ ամեն դպրոցական հաստատութիւնների մտնելով սաները, որոնք ցանկութիւն կունենան նուիրուել հոգուական պաշտօնիւ Հոդ. Սեմինարիաները բացառապէս պէտք է ծառայեն հոգիւներ պատրոսութեաւ Բարձր աստուածաբանական դպրոց կը մնայ հոգեոր ակադեմիան:

### ՕՐՅՈՂՈՔԸ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Յունաց սիեզերական պատրիարք Յովակիմ Գ. ի պատօնավարութեան տասնամեակ.

Մայիսի 25-ին տօնուել է Յունաց տիեզերական պատրիարք Յովակիմ Գ. ի, երկրորդ անգամ պատրիարքութեան տասնամեակը, Այդ օրը նորին Սրբութեան չնորհաւորել են սուրբ Սինօդի, Ազգային Խորհրդի անդամները և ուրիշներ:

Այս Յէտ. = (№ 24) առնելով Պատրիարքանի պաշտօնական և կեղեցական ձշմարտութիւնը լրագրից, գրում է որ վերջին 185 տարուայ ընթացքում միայն Յովակիմ Գ. ին է վիճակուել այդպէս երկար պաշտօնավարել:

### Յունաստանի եկեղեցական նոր օրէնքը

Յունաստանում վերաբննում՝ է եկեղեցական նոր օրէնքը. այդ օրէնքում արդէն որոշուած է եկեղեցու և հաւատոի մասին ոկղունքը. Յունական պետութեան մէջ տիւրող հաւատը, ասում է օրէնքը, Արևելեան—Օրթոգորոքիստոնէական եկեղեցու հաւատն է. միացած յայտնի կրօնները տանելի են, և նրանց գործերն ու պաշտամունքները կատարում են անարգել, օրէնքի հովանաւորութեան տակ. ընդ սմին արդելում է հաւատորասութիւնն ու յարձակումն տիրող կրօնքի վերայ. Պետական լեզու համարւում է այն, որով կազմւում են յունական պետական օրէնքների ընագիրները. ամեն մի ձգտում աղաւաղելու այդ լեզուն, արդելում է. Յունաստանի օրթոգորոք եկեղեցին զլուխ ճանաչելով մեր Տէր Յիսուս Քրիստոսին՝ դաւանութեամբ անբաժան միացած է կ. Պոլոոյ մեծ և միւս օքիուդու Քրիստոնէական եկեղեցու հետ անդրդուելի պահպանելով, որպէս և միւս եկեղեցիները, առաքելուկան և ժողովրդերի սուրբ կանոններն ու սուրբ աւանդութիւնները. Նո ինքնագլուխ (աֆտօկեֆալ) է, և ըոլոր իւր վարչական իրաւունքներով ըոլոր միւս եկեղեցիներից անկախ է դործում, ու կառավարուում է եպիսկոպոսների սուրբ Ախոգուի. Օրէնքով ճանաչուած ըոլոր կրօնների սրբազնութունը պաշտօնեաները ենթարկում են պետութեան կողմից այն հսկողութեանը, որը տարածւում է պետական դաւանութեան սրբազնութունների վերայ էլ. Ո. Գրքի ընագիրը պահպանուում է անազարտ. նրա այլ բարբառներով հրատարակութիւնը առանց նախորդիքաց հաւանութեան է. Պոլոոյ մեծ քրիստոնէական եկեղեցու, անպայման արդելում է.

Յ. Ա. Ե.

